«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գ. Գրիգորյան
«____» _____ 2020թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՄԲԻՈՆԱՅԻՆ Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2019-2020 ուստարի

Ամբիոնի անվանումը՝ Քրեական դատավարության
Ամբիոնի պետ՝ ոստիկանության փոխգնդապետ Ա. Հովհաննիսյան

1. Ընդհանուր տեղեկությունների ամբիոնի դասախոսական կազմի վերաբերյալ

Համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հաստիքացուցակի ամբիոնին հատկացված են հետևյալ հաստիքները՝
Ամբիոնի պետ – 1,
Դոցենտ – 1,
Ավագ դասախոս – 1,
Դասախոս – 1,
Ուսումնական ասիստենտ – 1:
Ընդամենը 5 հաստիք:

Ներկա պահին ամբիոնը համալրված է՝
Ամբիոնի պետ – 1,
Դոցենտ – 1,
Ավագ դասախոս – 1,
Դասախոս – 1,
Ուսումնական ասիստենտ – 1,
Համատեղման կարգով դասախոս – 2,
Պայմանագրային հիմունքներով դասախոս – 11:

2. Ընդհանուր տեղեկություն ամբիոնում դասավանդվող առարկաների մասին

Համաձայն կրթահամալիրի ուսումնական պլանների ամբիոնի առարկայացանկում հաշվետու ժամանակաշրջանում ընդգրկված են եղել և դասավանդվել են հետևյալ առարկաները, մագիստրոսական դասընթացները և մոդուլները՝

Համաձայն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական պլանի ամբիոնի առարկայացանկում հաշվետու ժամանակաշրջանում ընդգրկվել և դասավանդվել են հետևյալ առարկաները՝

1. ՀՀ քրեական դատավարության իրավունք,
2. ՀՀ իրավապահ մարմիններ,
3. Մինչդատական վարույթի հիմնահարցերը քրեական դատավարությունում,
4. Հետաքննության հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում,
5. Հետաքննությունը ոստիկանությունում,

6. Ապացուցման հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում,

7. Քրեական դատավարության մասնակիցների նկատմամբ պաշտպանության միջոցների կիրառման հիմնահարցերը:

Բոլոր առարկաները ապահովված են եղել ամբիոնի հաստիքային, համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդող դասախոսներով:

3.Տեղեկություն ամբիոնի դասախոսների անհատական ծանրաբեռնվածության վերաբերյալ

2019-2020 ուստարում քրեական դատավարության ամբիոնի ծանրաբեռնվածությունը կազմել է 3469 ժամ:

1) Ա. Հովհաննիսյան – 671 ժամ,
2) Ա. Ղազարյան – 740 ժամ
3) Գ. Սիմոնյան – 155 ժամ
4) Ա. Մարտիրոսյան – 117 ժամ,
5) Կ. Բիշարյան – 115 ժամ,
6) Տ. Եսայան – 45 ժամ,
7) Հ. Հայրապետյան – 138 ժամ,
8) Ա. Այվազյան – 24 ժամ,
9) Գ. Ստեփանյան – 156 ժամ,
10) Հ. Քոչարյան – 8 ժամ,
11) Մ. Բաբայան – 222 ժամ,
12) Ա. Թադևոսյան – 227 ժամ,
13) Հ. Մուրադյան – 150 ժամ,
14) Ս. Միրզոյան – 546 ժամ,
15) Վ. Ղազարյան – 26 ժամ,
16) Ա. Մկրտչյան – 4 ժամ,
17) Ս. Դիլբանդյան – 50 ժամ,
18) Ն. Շահինյան – 10 ժամ,
19) Ն. Վարյան – 65 ժամ:

4. Հաշվետու տվյալներ պլանավորված ուսումնական ծանրաբեռնվածության և դրա փաստացի կատարման վերաբերյալ

2019-2020 ուստարում ամբիոնի առարկաների գծով պլանավորված ողջ ծանրաբեռնվածությունը (3469 ժամ) դասախոսների կողմից կատարված է առանց թերացման՝ հիմք ընդունելով դասացուցակը: Պարբերաբար (ամիսը մեկ անգամ) վերահսկվել են լսարանային ժամաքանակների փաստացի կատարումը և տեղեկանքի ձևով ներկայացվել ուս. բաժին (կատարող՝ Ա. Հովհաննիսյան):

5. Հաշվետու տվյալներ պլանավորված ուսումնամեթոդական աշխատանքների և դրանց փաստացի կատարման վերաբերյալ

Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են թե՛ ամբիոնի, թե՛ դասախոսների անհատական աշխատանքային պլանով նախատեսված ուսումնամեթոդական բոլոր աշխատանքները:

Մասնավորապես, վերամշակվել ամբիոնում դասավանդվող առարկաների դասախոսությունների տեքստերը, ամբիոնում դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերը, կազմակերպվել և անցկացվել են նախաքննական կոնսուլտացիաներ:

Բացի վերոգրյալ աշխատանքներից, կազմվել և ամբիոնի նիստերում քննարկվել են ընթացիկ (միջանկյալ) քննությունների տարբերակներ, կիսամյակային և պետական ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցաշարերը, ստուգարքների հարցաշարերը, քննական և ստուգարքային տոմսեր՝ ամբիոնի դասախոսական կազմի կողմից դասավանդվող առարկաներով (մոդուլներով), կուրսային աշխատանքների թեմատիկ պլաններ՝ առկա և հեռակա ուսուցման սովորողների համար, մագիստրոսական թեզերի համար առաջարկվող թեմաների ցանկեր:

Քրեական դատավարության ամբիոնը ընդգրկված է եղել նաև ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման ավարտական կուրսերի սովորողների

նախաավարտական պրակտիկայի անցկացմանը և դրա պաշտպանությանը: Մասնավորապես՝ 2020 թ.-ի հունիսի 3-ից 5-ը քրեական դատավարության ամբիոնի կողմից իրականացվել է առկա վճարովի ուսուցման 4-րդ կուրսի սովորողների նախաավարտական պրակտիկայի պաշտպանությունը: Նշված պրակտիկայի ընթացքը և դրա պաշտպանության արդյունքները քննարկվել են քրեական դատավարության ամբիոնի՝ 26.06.2020 թ. նիստում:

Քրեական դատավարության ամբիոնը մասնակցել է նաև առկա անվճար ուսուցման շրջանավարտների վարժախաղերի կազմակերպմանն ու անցկացմանը. ամբիոնի պետ Ա. Հովհաննիսյանի և ավագ դասախոս Ա. Ղազարյանի կողմից իրականացվել է վարժախաղային խմբերի ղեկավարում:

Քրեական դատավարության ամբիոնը ընդգրկված է եղել նաև ակադեմիայի մագիստրատուրայի շրջանավարտների գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների անցկացմանը և դրանց պաշտպանությանը: Մասնավորապես՝ 2019 թվականի հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 8-ը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրատուրայի հեռակա ուսուցման 3-րդ կուրսի յոթ սովորողներ քրեական դատավարության ամբիոնում անցել են գիտամանկավարժական պրակտիկա, իսկ նոյեմբերի 11-ից 22-ը՝ գիտահետազոտական պրակտիկա:

2020 թ-ի փետրվարի 17-ից մարտի 13-ը (լրացուցիչ՝ 23-27.03.2020 թ.՝ առցանց հեռավար եղանակով) ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի մագիստրա-տուրայի առկա ուսուցման 2-րդ կուրսի երեք սովորողներ քրեական դատավարության ամբիոնում անցել են գիտամանկավարժական պրակտիկա, իսկ մարտի 30-ից ապրիլի 23-ը՝ գիտահետազոտական պրակտիկա:

Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների ավարտին մագիստրանտները հանձնել են ստուգարքներ: Գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկայի ընթացքի և արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկանքները ներկայացվել են ակադեմիայի մագիստրատուրայի բաժանմունք:

6. Հաշվետու տվյալներ պլանավորված գիտահետազոտական աշխատանքների և դրանց փաստացի կատարման վերաբերյալ

1. Հովհաննիսյան Ա. Օպերատիվ-հետախուզական ինֆորմացիայի հասկացության սահմանման հիմնահարցերը / Պետություն և իրավունք, 2020, № 1 (86), էջեր 119-123:
2. Ղազարյան Ա. Մեղադրական (մրցակցային) քրեական դատավարության երկու տեսությունները // «Օրենքի պատվար», 2020, № 9, էջեր 91-115:
3. Ղազարյան Ա. Մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը մայրցամաքային քրեադատավարական համակարգի երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա) // «Տարածաշրջան և աշխարհ», 2020, № 2, էջեր 64-70
4. Ղազարյան Ա. «Մասնավոր դելիկտի» տեսությունը, և դրա արտահայտությունները մասնավոր մեղադրանքի գործերի կազմակերպման նախագծային կարգավորումների վրա // «Տարածաշրջան և աշխարհ», 2020, № 3, էջեր 39-46
5. Ղազարյան Ա. Ժողովրդական մեղադրանքի նշանակությունը քրեական դատավարությունում // «Օրինականություն» № 116, 2020, էջեր 16-21
6. Ղազարյան Ա. Դատախազության նկատմամբ վստահության պաշտպանության սահմանադրական սկզբունքը // ԼՂՀ Դատական իշխանություն, 2019, թիվ 2(30), էջ 1-20: (համահեղինակությամբ՝ Ա. Ղամբարյան).
7. Ղազարյան Ա. Մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը անգլոամերիկյան քրեադատավարական համակարգում (Մեծ բրիտանիա (Անգլիա, Ուելս), ԱՄՆ) // Օրենքի պատվար, 2019, թիվ 8, էջ 27-42:

Հանձնվել են տպագրության՝

1. Հովհաննիսյան Ա. Հանցագործությունների բացահայտումը որպես օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիր / գիտական հոդված (ԵՊՀ «Պետություն և իրավունք» հանդես),

2. Ղազարյան Ա. Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով մասնավոր մեղադրանքի գործերով վարույթի ներդրվող մոդելի հիմնախնդիրների մասին / գիտական հոդված (ԵՊՀ «Պետություն և իրավունք» հանդես),

3. Ղազարյան Ա. Դատախազական անհնազանդություն քննչական ենթակայության նկատմամբ / գիտական հոդված (օրենսդրի լռությունը և դատավորի թողտվությունը) (ԼՂՀ «Դատական իշխանություն» հանդես),

4. Ղազարյան Ա. Ժողովրդական մեղադրանքը (actio popularis) և դրա ներդրման հեռանկարները հայկական քրեական դատավարությունում / Մենագրություն (քննարկվել և երաշխավորվել է կրթահամալիրի գիտխորհրդի 13.07.2020 թ. նիստում):

7. Տեղեկություններ դաստիարակչական, կազմակերպչական և այլ աշխատանքների վերաբերյալ

1. Ամբիոնի դասախոսները ամենօրյա աշխատանքներ են կատարել սովորողների դաստիարակչական հարցերով:

2. Ամբիոնին կից գործել է «Հանցագործությունների քննության և բացահայտման հիմնահարցերի հետազոտության գիտական խմբակը», որը կիսամյակի ընթացքում անցկացրել է 6 միջոցառում՝ համաձայն նախապես հաստատված պլանի: Անցկացված միջոցառումների վերաբերյալ տեղեկանքները ներկայացվել են ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժին:

8. Տեղեկություն ամբիոնում գործող բոլոր մատյանների գրանցումների վերաբերյալ

1. Ամբիոնում գործում են հետևյալ մատյանները.

ա) Ամբիոնի նախաքննական կոնսուլտացիաների

բ) Ուսումնական պարապմունքների հսկողության

գ) Ամբիոնի նիստերի արձանագրությունների

դ) Ստուգողական և կուրսային աշխատանքների հաշվառման

2. Ամբիոնի նախաքննական կոնսուլտացիաների մատյանում գրանցվել են ամբիոնի դասախոսների կողմից անցկացված կոնսուլտացիաները:

3. Հաշվետու ժամանակահատվածում անցկացվել է ամբիոնի թվով 11 նիստ, որտեղ առաջ են քաշվել և քննարկվել ուստարվա ընթացքում առաջացած կարևոր հարցերը:

4. Ստուգողական և կուրսային աշխատանքների հաշվառման մատյանում գրանցվել են ամբիոնում դասավանդվող առարկաներից ստուգողական և կուրսային աշխատանքների թեմաները:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի
քրեական դատավարության ամբիոնի պետ, ոստիկանության փոխգնդապետ
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Ա.Ռ. Հովհաննիսյան

16.07.2020 թ.